



ՍՈՒՐՔ ԶԱԿՈՐ

ՍՈՒՐՔ ԶԱԿՈՐ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ

ԳԻՏ ԽԱՁԻ
28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Աղոթք Ծառայութեան	Էջ 3
Ծանուցում	Էջ 4

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԷՆ (14.1-8)

Ուրիշ մը, որ ամենի ալիքներուն ընդմէջէն նաւով ճամբորդելու կը պատրաստուի, փայտէ կուռքի մը կ'աղօթէ, փոխանակ վստահելու զինք փոխադրող նաւուն, որ թէպէտ շահու համար հնարուած է եւ ճարտար արհեստաւորի ձեռքով շինուած, սակայն դո՛ւն ես, ո՛վ Հայր, որ քու տեսչութեամբդ զայն կը վարես. դո՛ւն ես որ ծովուն մէջ ճամբայ կը բանաս եւ ալիքներուն մէջ՝ ապահով շաւիղ, եւ ատով իսկ ցոյց կու տաս թէ ամէն վտանգէ կրնաս փրկել, նոյնիսկ եթէ անփորձ ըլլայ զեկի գլուխ կանգնողը:

Բայց քու կամքդ է՝ որ իմաստուն ստեղծագործութիւնդ մարդոց ծառայէ. ահա թէ ինչո՛ւ մարդիկ իրենց կեանքերը կը վստահին ամենափոքր փայտին, եւ նոյնիսկ լաստով մը ալիքները ճեղքելով ողջ-առողջ տեղ կը հասնին:

Արդարեւ, ջրհեղեղի ատեն ալ, երբ ամբարտաւան հսկաները կորուստի մատնեցիր, Նոյ՝ աշխարհի յոյսը, լաստափայտին ապաւինեցաւ եւ քու ձեռքովդ առաջնորդուեցաւ, աշխարհի

մէջ մարդկային սերունդը ապահովելու համար:

Հետեւաբար օրհնեալ է այն փայտը որ արդարութեան պատճառ կ'ըլլայ. բայց անիծեալ են թէ՛ ձեռագործ կուռքը եւ թէ՛ զայն շինողը, մէկը՝ զայն շինելուն համար, իսկ փուճ փայտը՝ աստուած կոչուելուն համար:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (33.22-34.1)

Տէ՛րն է մեր հայրը, Տէ՛րն է մեր դատաւորը, Տէ՛րն է մեր իշխանը, Տէ՛րն է մեր թագաւորը, Տէ՛րն է մեր փրկիչը, ի՛նքն է որ մեզ պիտի փրկէ:

Այն ատեն, նաւերուդ պարանները պիտի փտին, կայմերը պիտի իյնան. ալ ո՛չ առագաստ պարզելու պէտք պիտի ըլլայ, ո՛չ ալ դրօշակ, եւ նաւերդ մնալէն պիտի քայքայուին:

Տէ՛րը իր վարձատրութենէն պիտի չզրկէ ոեւէ մէկը, ճիշդ ինչպէս յաղթանակէ մը վերջ երբ աւարը մեծ ըլլայ՝ կաղերն անգամ անկէ բաժին մը կ'առնեն: Այն ատեն այլեւս յոգնութիւն եւ ցաւ գոյութիւն պիտի չունենան, որովհետեւ Տէ՛րը պիտի ներէ իր ժողովուրդին մեղքերը:

Մօտեցէ՛ք, ո՛վ հեթանոսներ, եւ լսեցէ՛ք. ակա՛նջ դրէք, ո՛վ իշխաններ. թող երկրին բնակիչները եւ աշխարհի ժողովուրդները լսեն:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ
ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(1.18-24)

Խաչելութեան մասին խօսիլը յիմարութիւն կը թուի կորստողներուն համար, մինչ մեզի՝ փրկութեան դիմողներուն համար Աստուծոյ զօրութիւնն է անիկա։ Արդարեւ մարգարէութեան մէջ գրուած է. «Իմաստուններուն իմաստութիւնը պիտի խափանեմ, խելացիներուն խելքը պիտի կորսնցնեմ»։ Այն ատեն ո՛ւր պիտի մնան իմաստունները կամ ուսեալները եւ կամ այս աշխարհի հարցերը քննող ճարտասանները։ Չէ՞ որ Աստուած ցոյց տուաւ թէ այս աշխարհի իմաստութիւնը յիմարութիւն է։ Որովհետեւ աշխարհը իր ունեցած իմաստութեամբ չկրցաւ ճանչնալ զԱստուած եւ անոր իմաստութիւնը, Աստուած ուզեց յիմարութիւն համարուած խաչին քարոզութեամբ փրկել հաւատացողները։ Եւ քանի հրեաներ հրաշք կ'ուզեն, իսկ յոյներ իմաստութիւն կը փնտռեն, մենք խաչուած Քրիստոսը կը քարոզենք, որ գալթակղութիւն է հրեաներուն համար եւ յիմարութիւն՝ հեթանոսներուն համար, թէպէտ նոյն այդ հրեաներէն եւ յոյներէն կանչուածները եւ դարձի եկածները Քրիստոսը կ'ընդունին որպէս Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը։



ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(24.27-36)

Մեր Տէր Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Մարդու Որդին պիտի գայ կայծակի նման, որ երբ փայլատակէ՝ կը լուսաւորէ ամբողջ երկնակամարը, արեւելքէն արեւմուտք։ Արծիւները կը հաւաքուին հոն ուր դիակ կայ։

Նեղութեան այդ օրերէն անմիջապէս ետք արեւը պիտի խաւարի եւ լուսինը այլեւս պիտի չփայլի. երկինքէն աստղերը պիտի իյնան եւ երկնային մարմինները պիտի սասանին։ Ապա Մարդու Որդին նշանը պիտի երեւի երկինքի մէջ, եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն Մարդու Որդին որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ փառքով։ Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի ղրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը։ Թղենին թող ձեզի օրինակ ըլլայ։ Երբ տեսնէք որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է։ Նոյնպէս ալ, երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք թէ Մարդու Որդին գալուստը մօտ է։ Վստա՛հ եղէք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին։ Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան։

Սակայն ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ իսկ Որդին, բայց՝ միայն Հայրը»։

ԱՂՕԹՔ ԾԱՌ-ԱՅՈՒԹԵԱՆ

Ռայնհոլդ Նիպուր

ԶԱստուած գովաբանենք
գեղեցկութեան համար իր արարչութեան
եւ մեծութեան համար իր ողորմութեան:
Քուկդ են, ով Տէր, արքայութիւնը
եւ զօրութիւնը եւ փառքը:
Քեզ կը գովաբանենք
այս աշխարհի արարման համար,
ամբողջ կենդանական աշխարհի
հրաշալիութեան համար,
կարգաւորութեան համար եւ
ներդաշնակութեան,
որոնց մէջ կ'ընթանայ
ստեղծագործութիւնդ:
Յանքի եւ հունձքի
ժամանակներուն համար,
ամրան ու ձմրան համար,
ցերեկուան ու գիշերուան համար:
Քեզ կը գովաբանենք խաղաղութեան եւ
մեծասքանչութեան համար բնութեան,
կեանքի բոլոր մարթանքներուն համար,
որոնցմով քու անբան արարածներդ
զինուած են,
նաեւ անոնց մեզի սորվեցուցած
հեզութեան համար,
քանզի անոնցմէ իւրաքանչիւրը
արարչութեանդ մէջ իրեն համար
սահմանուած տեղին մէջ է, պատշաճօրէն:
Կ'օրհնաբանենք քեզ ամէն ինչին համար,
որ մեր կեանքին կը սատարէ,
նաեւ նախախնամութեանդ համար,
որ աշխարհը կը պահէ

կարգաւորութեան մէջ:

Կը գովաբանենք քեզ
բազում ժամանակներ ետք
արարմանդ համար մարդ էակին,
որ ըստ պատկերիդ արարեցիր,
որպէսզի անոր սրտի ներսիդին
թագաւորես.
նաեւ իւրաքանչիւր մատուցման համար
սիրոյդ,
որով ան ետ կանչուած է իր
կամակորութենէն,
եւ վերաստեղծուած ու մաքրամաքրուած:
Կը գովաբանենք քեզ
հրաշափառութեան համար,
որ կը ճառագայթէ տխուր այլ
մեծ պատմութեան ընդմէջէն
մարդկային սերունդին.
սուրբերուն եւ տեսանողներուն համար,
որոնք իրենց տառապանքով
կատարելութեան են բարձրացուած.
արիասիրտ մարդոց համար՝
որոնք դիմադրած են չար ուժին.
բոլոր անոնց համար՝
որոնք քաղցր են եղած
վիրաւորուածներուն եւ
ջախջախուածներուն հանդէպ.
մարգարէներուն համար՝
որոնք մարդկային պատմութեան
դէպքերուն մէջ
քու դատաստանդ եւ գութդ ճանչցած են,
եւ իրենց նմաններուն յայտարարած
կամքիդ խորհուրդները:
Եւ ամենէն աւելի
գոհաբանութիւն կը յայտնենք քեզի
Յիսուս Քրիստոսի համար,
որ մեր առջեւ պարզեց
քու արդարութեանդ եւ սիրոյդ իմաստը:
Մենք կը գովաբանենք եւ կ'օրհնաբանենք
Քու փառաւոր Անունդ, ով Տէր: Ամէն:

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔ

Հովանավորությամբ՝
Գերշ. Բարգև Արք. Չարեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին

Կազմակերպությամբ՝
Սուրբ Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցու, Մոնթրեալ
Եւ Սուրբ Գեորգ Եկեղեցու, Լաւալ

ՄԱՅԻՍ 6-17 2019



May 6: Depart from Montreal to Tel Aviv via Munich

May 7: Arrive at Tel Aviv, be greeted by our guide, drive to hotel

May 8: Tel Aviv / Ein Bokek, Dead Sea

- Visit Old Jaffa
- St. Nicholas Armenian Church and Convent
- Arrive at our hotel at the Dead Sea
- Swim in the dead sea, enjoy a mud bath ...

May 9: Ein Bokek, Dead Sea / Jerusalem

- Depart for Masada overlooking the Dead Sea (Cable car ride to the top)
- Visit Herod's many palaces
- Proceed to Ein Gedi, fabled spring of David
- Continue to Qumran, discovery site of Dead Sea scrolls
- Proceed to Jerusalem

May 10: Jerusalem

- Nativity Church
- Nativity Church - Armenian Monastery
- Shepherd's Field
- Israel Museum - Scale model of Jerusalem

May 11: Jerusalem

- Old City
- Church of St. Anne
- Pool of Bethesda
- Chapel of Flagellation
- Lithostrotos
- Arch of the Ecce Homo
- Arab Bazaar
- Church of the Holy Sepulchre, visit the Armenian Section
- Armenian Patriarchate of Jerusalem

May 12: Jerusalem

- Mount of Olives
- Church of Pater Noster
- Church of Ascension
- Russian Ascension Church
- Garden of Gethsemane, Church of all Nations
- The Tomb of Virgin Mary
- Armenian Seminary and St. James Cathedral (Sourp Hagop) at the Armenian Patriarchate of Jerusalem

Day 13: Jerusalem

- Visit the Western Wall (Wailing Wall)
- View Mosque of Omar
- Visit the Jewish Quarter
- Walk along the Excavated Cardo
- Tour the Herodian Mansions

May 14: Jerusalem / Tiberias

- Leave Jerusalem for Tiberias
- Stop at ancient Jericho, visit the ruins of the city
- View Elisha's Fountain & the Mount of Temptation
- Travel to mount Tabor, Site of the Transfiguration of Jesus
- Continue to Nazareth to visit the Annunciation Church & St. Joseph's Workshop
- Drive to Tiberias

May 15: Tiberias

- Boat ride on the sea of Galilee
- Visit Capernaum
- Visit the Synagogue where Jesus taught
- Proceed to Tabgha, site of miracle of loaves
- Drive to Mount of Beatitudes, site of the Sermon on the Mount
- Drive to Caesaria Philip (Banias Springs)
- Visit Tel Dan, a Canaanite town
- Stop at Kursi, site where Jesus healed a man possessed by demons
- Proceed to the Jordan River for a baptismal service at Yardenit

May 16: Tiberias / Tel Aviv

- Drive to Cana of Galilee, where Jesus performed the first miracle
- Visit Mount Carmel and enjoy a magnificent view of Haifa
- End our visit at Caesarea, see the Roman theater and Herod's palace & aqueduct
- Drive to our hotel in Tel Aviv

May 17: Return flight to Montreal



Յուշեկալ տեղեկություններու եւ արձանագրութեան համար շուտով հեռաձայնել կամ գրել՝
Կարօ Նոխստեանին՝ 514 331-5445 ext. 202 - garo.nokhoudian@sourphagop.net / Գրիգոր Տէր Դազարեանին՝ 514 918-6681 - krikordg@gmail.com
Հերմինէ Մանուկեանին՝ 514 402-5137 - hermine.manoukian@gmail.com / Մարալ Պէքարեանին՝ 416 858-2284 - maralbekarian@hotmail.com